

Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն  
առարկայի օլիմպիադա 2017թ.

Մարզային փուլ  
10-12 - րդ դասարան

Տևողությունը՝ 150 րոպե:

Գնահատումը՝ 20 միավորանոց համակարգով:

Յուրաքանչյուր առաջադրանքին տրված ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

1. Ե՞րբ և որտե՞ղ է սկզբնավորվել ֆիդայական շարժումը.

- ա) Արևմտյան Հայաստանում XIX դ.  v  բ) Միրիայում XIX դ.
- գ) Արևելյան Հայաստանում XVII դ.  դ) Հյուսիսային Հայաստանում XVII դ.

2. Հայկական քանի՞ դիվիզիա է մասնակցել Հայրենական Մեծ պատերազմին (1941-1945թթ).

- ա) 5  բ) 6  v
- գ) 7  դ) 3

3. Քանի՞ մետր է կազմում հակահետևակային բեկորային ականի / ՀԲԱ-2Մ/ համատարած խոցելիության շառավիղը

- ա) 5 մ  բ) 3 մ
- գ) 6 մ  դ) 4 մ  v

4. Գիշերային ժամերին թշնամուն սարսափի մեջ պահող Գ.Նժդեհի դիվերսիոն խմբերը կոչվում էին՝

- ա) Հայ-Արիներ  բ) Գայլախմբեր  v
- գ) Բազեններ  դ) Արծիվներ

5. Միջուկային զենքից առաջացած լուսային ճառագայթումը արդյունք է՝

- ա) շիկացած գազերի ու շիկացած  բ) շիկացած նյութերի ու   
օդի:  շիկացած գազերի:
- գ) շիկացած նյութերի և շիկացած  v   
օդի:

**6. Սովորաբար քանի՞ մետր ճակատ է ունենում հակատանկային ականադաշտը.**

- |              |                                     |              |                          |
|--------------|-------------------------------------|--------------|--------------------------|
| ա) 300-500 մ | <input checked="" type="checkbox"/> | բ) 500-700 մ | <input type="checkbox"/> |
| գ) 100-200 մ | <input type="checkbox"/>            | դ) 150-350 մ | <input type="checkbox"/> |

**7. Վարակի ո՞ր խմբին է պատկանում տզային էնցեֆալիտը.**

- |               |                                     |              |                          |
|---------------|-------------------------------------|--------------|--------------------------|
| ա) Աղիքային   | <input type="checkbox"/>            | բ) Մաշկային  | <input type="checkbox"/> |
| գ) Արյունային | <input checked="" type="checkbox"/> | դ) Շնչառական | <input type="checkbox"/> |

**8. Մաշկի կամ լորձաթաղանթի ամբողջականությունը խախտող վնասվածքները կոչվում են՝**

- |              |                                     |                |                          |
|--------------|-------------------------------------|----------------|--------------------------|
| ա) սալջարդեր | <input type="checkbox"/>            | բ) պատռվածքներ | <input type="checkbox"/> |
| գ) վերքեր    | <input checked="" type="checkbox"/> | դ) ճեղքվածքներ | <input type="checkbox"/> |

**9. Ինչպե՞ս է կոչվում թաքստոցի հետևում գտնվող գնդակից չխոցվող տարածությունը (թաքստոցի գագաթից մինչև հանդիպման կետը).**

- |                             |                                     |                          |                          |
|-----------------------------|-------------------------------------|--------------------------|--------------------------|
| ա) Պատասպարված տարածություն | <input checked="" type="checkbox"/> | բ) Մեռյալ տարածություն   | <input type="checkbox"/> |
| գ) Պաշտպանված տարածություն  | <input type="checkbox"/>            | դ) Անխոցելի տարածություն | <input type="checkbox"/> |

**10. Արգելվում է չպաշտպանված քաղաքների, շենքերի ու շինությունների և այլ բնակելի վայրերի.**

- |                    |                                     |                     |                          |
|--------------------|-------------------------------------|---------------------|--------------------------|
| ա) գրավումը        | <input type="checkbox"/>            | բ) կրակի տակ պահելը | <input type="checkbox"/> |
| գ) ուժակոծությունը | <input checked="" type="checkbox"/> | դ) գնդակոծությունը  | <input type="checkbox"/> |

11. 12 մետր իրական բարձրություն ունեցող ծառի բարձրությունը X կետից քանոնով չափելիս ստացան 8 մմ: Գտնել X կետից մինչև տվյալ ծառը եղած հեռավորությունը:

$$Z = \frac{1200 \text{ սմ}}{8 \text{ մմ}} \times 5 = 750 \text{ մետր}$$

12. Ո՞րն է կոչվում ուղիղ կրակոց:

Ուղիղ կրակոց կոչվում է այն կրակոցը, որի ժամանակ գնդակի թռիչքի հետագիծը իր ողջ երկարությամբ չի բարձրանում նշանատման գծից վեր, նշանակետից բարձր:

13. Ո՞րն է կոչվում մեռյալ տարածություն:

Պատասպարված տարածության այն մասը, որում նշանակետը տվյալ հետագծի դեպքում չի կարող խոցվել կոչվում է մեռյալ (գնդակոծությունից զերծ) տարածություն:

14. ԹՎԵԼ զինվորական պատասխանատվության տեսակները:

- Կարգապահական,
- Վարչական,
- Քաղաքացիաիրավական,
- Նյութական,
- Քրեական:

15. Ի՞նչ է քիմիական զենքը:

Քիմիական զենքը զանգվածային խոցման զենք է՝ հիմնված քիմիական նյութերի թունավոր հատկությունների վրա:

16. Ո՞րն է կոչվում արգելափակիչ կրակ:

Նշանակետերի վրա ստորաբաժանումը կենտրոնացված կրակ է բացում ինքնաթիռի թռիչքի ուղղությունից առաջ այն հաշվով, որ գնդակների հետագծերի խուրձը հատվի նշանակետի հետ: Հրաձգության այդ ձևը կոչվում է արգելափակիչ կրակ:

17. Գնդակները ըստ խոցման հատկության լինում են՝

- սովորական,
- գրահահար-հրկիզող,
- լուսածրող:

**18.Ինչի՞ համար են նախատեսված ճառագայթային հետախուզության չափիչ սարքերը:**

Ճառագայթային չափիչ սարքերը նախատեսված են իոնացնող ճառագայթների դիտման և գրանցման համար:

**19.Ով՞ է փրկարարը:**

Փրկարարը փրկարարական աշխատանքեր կատարելու համար նախատեսված և ՀՀ օրենսդրությամբ սահմանմված կարգով ատեստավորված ֆիզիկական անձն է:

**20.Ինչո՞վ է տարբերվում դիրեկցիոն անկյունը մագնիսական ազիմուտից:**

Դիրեկցիոն անկյունը *կիրմետրային ցանցի ուղղահայաց գծի հյուսիսային ուղղության* և դեպի առարկան ուղղված գծով կազմված անկյունն է, իսկ մագնիսական ազիմուտը՝ *մագնիսական միջօրեականի հյուսիսային ուղղության* և (ժամացույցի սլաքի պտտման ուղղությամբ) մինչև նշանակետն ընկած հորիզոնական անկյունն է: